

# Կայունության շրջանակ

## ԱԿԲԱ Բանկ

Երկիր՝

ՀԱՅԱՍՏԱՆ

Ծրագրի համար՝

51993

Բիզնես ոլորտ՝

Ֆինանսական հաստատություններ

Պետական/մասնավոր՝

Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա՝

FI

Հաստատման ամսաթիվ՝

2020թ.-ի մայիսի 05-ը

Կարգավիճակ՝

Հատկացումն ընթացքի մեջ է

Ծրագրի ամփոփ փաստաթղթի (ԾԱՓ) անգլերեն տարբերակի հրապարակման  
ամսաթիվ՝

2020թ.-ի հունիսի 23-ը

Ինչպես թույլատրվում է Տեղեկությունների հասանելիության քաղաքականության III Բաժնի 2.6 կետով,  
սույն ԾԱՓ-ի հրապարակումը հետաձգվել է՝ Տեղեկությունների հասանելիության Հրահանգի 1.4.4 կետի  
համաձայն:

## Ծրագրի նկարագրություն

ԱԿԲԱ Բանկին մինչև 20 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով առաջնային  
չապահովված վարկի տրամադրում՝ Կայունության շրջանակի (Resilience Framework)  
ներքո: Վարկի միջոցները կուղղվեն ՄՓՄՁ-ների և ավելի մեծ ընկերությունների  
հետագա վարկավորման համար՝ Կայունության շրջանակի Քաղաքականության  
մասին հայտարարությանը համահունչ:

Ինչպես և բազմաթիվ այլ երկրներում, կորոնավիրուսի համաճարակը և այն զսպելու  
ջանքերը զգալի բացասական ազդեցություն են ունենում Հայաստանում տնտեսական

գործունեության վրա: Այս ֆոնին մասնավոր հատվածին ցուցաբերվող՝ իրացվելիության աջակցությունը առանցքային է երկրի՝ տնտեսական անկմանը դիմակայելու, ներքին ու արտաքին գործոնների նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու և ավելի արագ վերականգնմանը հասնելու կարողության համար:

Քանի որ բանկային ոլորտը կազմում է երկրում ընդհանուր ֆինանսական միջնորդության 90%-ը, բանկային վարկերը մասնավոր հատվածի ֆինանսավորման հիմնական աղբյուրն են: Այնուամենայնիվ, առևտրային վարկերի տրամադրումը գրեթե դադարել է, քանի որ բանկերը տեղափոխել են իրենց ուշադրությունը հաշվեկշռի բուֆերների հետագա ամրապնդման վրա:

## Ծրագրի նպատակները

ՎԶԵԲ-ի ներդրումները կօգտագործվեն Covid-19 միջավայրում մասնավոր ՄՓՄՁ-ների և կորպորատիվ հաճախորդների հետագա վարկավորման համար՝ աջակցելով նրանց ֆինանսավորման կարիքներին և կայունությանը: ՎԶԵԲ-ը ոչ միայն ֆինանսավորում կտրամադրի ԱԿԲԱ բանկին, այլև հարմարավետություն կապահովի այլ վարկատուների համար և, հնարավոր է, կնպաստի, որ ԱԿԲԱ բանկը ավելի շատ ֆինանսավորում ներգրավի նրանցից:

## Անցումային ազդեցությունը

Ակնկալվող անցումային ազդեցության (ETI) ցուցանիշը՝ 70:

**Կայուն.** Ծրագիրը կնպաստի ԱԿԲԱ բանկի ֆինանսական կայունությանը՝ նրան հնարավորություն ընձեռելով շարունակել վարկային գործառնությունները՝ չնայած հաշվեկշռային ճնշումներին, որոնք առաջացել են համաճարակի տնտեսական հետևանքների պատճառով:

**Մրցակցային.** Ծրագիրը կօգնի ԱԿԲԱ բանկին շուկայում պահպանել իր ամուր դիրքերը՝ մնալով ակտիվ և արդյունավետ շուկայի դերակատար և իրականացնելով կայուն վարկային գործառնություններ:

## Հաճախորդը

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

**ԱԿԲԱ ԲԱՆԿԸ** ՎԶԵԲ-ի երկարաժամկետ գործընկերն է 2003թ.-ին առաջին ներգրավվածությունից ի վեր, և Հայաստանի առաջատար բանկերից մեկն է: Այն Հայաստանում 4-րդ խոշորագույն բանկն է ընդհանուր ակտիվների առումով և գերիշխող դիրք ունի գյուղատնտեսության և ՄՓՄՁ-ների վարկավորման գործում՝ մասնավորապես, գյուղական վայրերում: Հայաստանի բոլոր մարզերում 60 մասնաճյուղերից բաղկացած իր ընդարձակ ցանցը թույլ է տալիս նրան հասանելի լինել ամբողջ երկրում բազմաթիվ պոտենցիալ հաճախորդների համար:

Բանկը պատկանում է տեղական բաժնետեր *ACBA Federation* ՓԲԸ-ին (շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը համախմբում է Հայաստանում 10 ԳՓՄՄ-ներ (Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորումներ)), և որին ներկայումս պատկանում է բաժնետոմսերի 95%-ը, իսկ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ-ին՝ մնացած 5% -ը:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

20,000,000.00 ԱՄՆ դոլար:

Մինչև 20 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով առաջնային չապահովված վարկ՝ Կայունության շրջանակի (Resilience Framework) ներքո: Վարկի մարումը կատարվում է 2 տարիների ընթացքում՝ հավասար կիսամյակային վճարումների միջոցով՝ մեկ տարի արտոնյալ ժամանակահատվածի ավարտի պահից սկսած:

## Ծրագրի ընդհանուր գումարը

20,000,000.00 ԱՄՆ դոլար:

## Հավելյալություն

**COVID-19 ճգնաժամի արձագանք.** ՎԶԵԲ-ը ֆինանսավորում է առաջարկում այնպիսի միջավայրում, որտեղ միջազգային առևտրային վարկատուների մեծամասնությունը կրճատում է իրենց ազդեցությունը զարգացող երկրներում և չի ցանկանում նոր ֆինանսավորում տրամադրել նույնիսկ լավ հաճախորդներին:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն 2019թ.): ԱԿԲԱ բանկից պահանջվում է շարունակել համապատասխանել ԳՊ 2, 4 և 9-ին, իրականացնել համապատասխան բնապահպանական և սոցիալական ընթացակարգերը և ՎԶԵԲ-ին ներկայացնել տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ:

## Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Կիրառելի չէ:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Անժելիկա Բաղրամյան

Anzhelika.Baghramyan@acba.am

+ 374 10 31 8888

www.acba.am

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Արամի փող. 82-84

## Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացման ամսաթիվը՝

2020թ.-ի հուլիսի 23-ը:

## Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎԶԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՄՔ)

[ԲՄԲ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանելու «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացում»: ԲՄԲ-ն և ԳՊ-ները ընդգրկում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակակից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՄԲ](#)-ում:

## Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են խարդախության կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ [compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com): Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

## Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՋԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություններ են առկա ՎՋԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՋԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

## Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՋԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#), կամ իր [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#): Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը՝ տեղեկանալու, թե ինչպես կարելի է Դիմում ներկայացնել՝ լրացնելով [առցանց գաղտնի ձևաթուղթը](#), [էլ-փոստով](#), [փոստով կամ հեռախոսով](#): ԾՀԱՄ-ը պատրաստ է քննարկել ձեր մտահոգությունները և պատասխանել ցանկացած հարցերի, որոնք դուք կարող եք ունենալ Դիմումի ներկայացման կամ վարման վերաբերյալ, և այս գործընթացներն իրականացնելիս ԾՀԱՄ-ը հետևում է [Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությանը](#) և [Ուղեցույցին](#): Ըստ պահանջի, Դիմումատուների ինքնությունը կարող է գաղտնի պահվել: